**ՍՈՒՄԲԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (ԱՐՏԵՄԻ) ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆՑ**




1894-1914 թվականներին ապրել ու աշխատել է Բաքվում: Երևանի քաղաքագլուխ է ընտրվել 1915թ. փետրվարին, պաշտոնավարել է մինչև 1917թ. դեկտեմբերը:

1915թ. Հովհաննես Թումանյանի և Հովսեփ Խունունցի հետ այցելել է Կովկասյան ռազմաճակատի հայ կամավորների դիրքերը: Առաջին հանրապետության տարիներին մասնակցել է հայ - վրացական բանակցություններին՝ իբրև հայկական կողմի պատվիրակ, ինչպես նաև 1920թ. ապրիլին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասյան կոնֆերանսին:

Պետական ծառայության ընթացքում հասել է երրվյալ հավատարմատարի աստիճանի:

1919թ. ընտրվել է Առաջին հանրապետության խորհրդարանի անդամ: